

Թիւ հաստատուն անդամաց		Թիւ աշակերտաց երկուց դըպ-	
Թիւ ժամանակակար անդամաց	11	րոցաց	165
աւաջին կարգի		Թիւ աշակերտուհեաց	63
կերպորդ կարգի	20	Թիւ սուսուցչաց	4
Թիւ փոփոխական անդամաց ա-	16		
ւաջի կարգի			
կերպորդ կարգի	17		
կերպորդ կարգի	23		
	23		

Նախագահ	Յուրաքանչեւ Մարտիրոս
Գլխավոր	Պարոն Դավիթ
Հարկաւոր	Մարտիրոս Աբրահամ
	Խաչատուր Բարսեղ
Տեղաւոր	Կարապետ Տէր Իսահակ
Քարտուղի	Հարություն Խաչատուր

ՈՁ ՈՒՐ.

Նայեցէք, մարդիկ, հիւանդ թաղած կին,
 Յմահ չարչարած իւր զաւակներով,
 Անցնումէ կոծով ողբով լալագին
 Մեծամեծների պալատի մօտով,
 Տառապեալ հիւանդ կընող յետեից
 Վազումեն կրծող շներ խմբովին,
 Ձուր է կամենում մայրը նոցանից
 Պաշտպանել սիրած իւր զաւակներին,
 Նա հեռացնելու կատաղի շներ
 Չունի ոչինչ ոյժ, մինչդեռ անտարբեր
 Լուսամուտներից բազմաթիւ զլուխներ
 Նայումեն կընող թշուառ և անտէր,
 Շնչասպառ զրուծեան չէ զթում ոչ ոք,
 Դեռ գրգռումեն շրններին մարդիկ,—
 Քո տագնապ, տանջանք այսպէս չեն արդեօք,
 Իմ բազմաշարշար զոհված հայրենիք . . .

Իշխան Բագրատունի.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Վեհափառ Աթոռիկոսն Ասկաթացի արժանայիշատակ Սեդոմոն Պապէի
 կտակի և կտակաւանդ դրամների մասին հետեւեալ անօրինութիւն բարեհա-
 ճեց անել իւր Հայրապետական Առնդակով, որի պատճէնը կգտեղենք
 ահա այստեղ.

Գէորգ ծառայ Քրիստոսի եւ անհատների կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Բարեշնորհ Անդամոց թեմական Ատենին Տփիսեաց, բարեկրօն աւագերիցանց, քահանայից եւ համօրէն եկեղեցական դասուց, գերայարգ աղնուականաց, պատուարժան վաճառականաց եւ արհեստաւորաց եւ ամենայն չափու հասակի եւ աստիճանի հայազգի՝ որդւոց մերոց սիրելեաց, մանաւանդ քահանայից, երեցփոխանի, հոգաբարձուաց եւ համայն բարեպաշտ ժողովրդոց սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Մողնւոյ թաղի Տփիսեաց հարազատից Մայր Աթոռոյս նուիրեմք զողջոյն Փրկչաւանդ եւ զօրհնութիւն Հայրապետական, եւ աղօթս առնեմք առ Աստուած եւ աղաչեմք հանապազ, զի սէրն իւր եւ շնորհք Հոգւոյն սրբոյ սփռեսցին ի հոգիս եւ ի մարմինս ձեր ամենեցուն առ ի կարող լինել ձեզ կեալ առաքինական վարուք զարդարեալ եւ փայլեալ նախանձելի բարեպաշտութեամբ, եւ ըստ հաճոյիցն Աստուծոյ քաղաքավարեալ զկեանս ձեր, արժանասցիք հասանել երկնապարգեւ աւետեաց անվախճան երանութեան սրբոց եւ արդարոց իւրոց պարեւ եւ հրճուել յերկնային հարսնարանին Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, ամէն:

Եւ ընդ աստուածապարգեւ եւ Քրիստոսական ողջունի եւ օրհնութեանս յայտնի լիցի համայն եկեղեցւոյ Մողնւոյ, զի հանգուցեալն ի Տէր պարօն Սողոմօն Պապէ արժանայիշատակ այրն որ ի Նոր—Ջուղայէ վերաբնակեալ ի Վալկաթա քաղաքն Հնդկաց, յիշելով զօր մահուան եւ ըզձալով թողուլ զյիշատակ արժանաւոր եւ մշտնջենաւոր ի տաճարի Տեառն ի Նոր Սիօնի, միանգամայն ժառանգել զերանութիւն հանդերձեալ կենաց, ի կենդանութեան իւրում կտակեալ էր զգումար ինչ յանուն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի եւ այլոց տեղեաց, ընդ որս նաեւ յանուն Մողնւոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյ Տփիսեաց ի ձեռն քահանայից զորին, ապահովեալ զգրաման կտակաւանդ յԱնգղիական յարքունական զրամատան ի Վալկաթա քաղաքին Հնդկաստանի:

Գումարն կտակեալ ի բարեյիշատակ Սողոմօն Պապէէ ի վաղ ժամանակաց հետէ ց18-ն ապրիլ ամսոյ 1878 թուականի Փրկչական մնայր ի շահեցողութեան ի զրամատան, յորմէ թէպէտ բազմիցս պահանջեալ են օմանք յերեցփոխանաց զբաժին եկեղեցւոյ Մողնւոյ, այլ վերապալ էին ի յաջողութենէ գործոյն ոչ ըստ օրինաւոր կարգի եւ կանոնի հետեւելով:

Եւ յորժամ առաքեցաք զԳերապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոս զԱռաջնորդն Պարսկահայոց եւ Հնդկահայոց պաշտօնիւ ծայրագոյն նուիրակութեան եւ յայցելութիւն Հայոց ի Հնդկաստան, կարգեցաք զնա փոխանորդ մեր եւ հաւատարմատար վասն կտակաց գտանելոց յանուն Մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի ի սահմանս Հնդկաստանի առաջի Հնդկական—անգղիական

Այստեղից կառավարութեան ընդ որս յանձնեցաք Նորին գերապատուութեան և զգործն կտակի արժանայիշատակ Սողոմոն Պապէի զորմէ յայտարարեաց առ մեզ գերապատիւ Մակար սրբազան Արքեպիսկոպոս Առաջնորդն վիճակին Հայոց Նոր—Նստիջեանի և Պետրապոլոյ յորժամ վարէր ղթեմակալ առաջնորդութիւն վիճակիդ Տիխեաց համաձայն խնդրանաց երեցփոխանի եկեղեցւոյդ:

Արդ յամի Տետն 1878 վերջաւորեալ Գրիգորիս Արքեպիսկոպոսի զգործ հրիտակի Սողոմոն Պապէի ի ձեռն յատուկ փաստաբանի և օրինասահման եղանակաւ ընկալեալ է ի ձեռն տեղական պատշաճ դատարանի ի դրամատանէն զկտակաւանդ գումարն զոր և հետզհետէ հասցոյց այսր առ մեզ ի Ս. Էջմիածին առ ի տնօրինել զարժանն և մեք պատուիրեցաք Սինօղիի փութով հաղորդել Ձեզ միջոցաւ թեմական Ատենի վիճակիդ զամենայն զհաշիւս առաքելով ընդ նմին և զգումարն երկրաժին զհասանելին յանուն սրբոյ եկեղեցւոյդ Մողնւոյ:

Եւ զի նպատակ մեր էր և է զկտակաւանդութիւն արժանայիշատակ հանգուցելոյն Սողոմոն Պապէի մշտնջենաւորել յանուն իւր գործադրելով և արդիւնաւորելով յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ մերոյ ընդ երկար խորհրդակցեալ ընդ անդամս Սինօղի և համաձայնութեամբ Պ. Յարութիւն բժըշկապետ Յովհաննիսեան երեցփոխանի և քահանայից ս. Գէորգ եկեղեցւոյդ Հայոց Մողնւոյ արժան դատեցաք յերիս մասունս հաւասարել զգումարն վերջաւան հաշիւս ընդ իւրեք բաժնիս յառաջագոյն յարկուց և իւրեք կողմէն յատկացուցանելով զմի մասն յանուն ս. Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյս և զերկուս մասունս յանուն ս. Գէորգ եկեղեցւոյ Մողնւոյ առ ի յատկացուցանել զմի մասն միաբան քահանայից և զմիւսն ի նպաստ ս. Գայիանեան օրիորդական հոգեւոր վարժարանի կառուցելոյ ի սրահի ս. Գէորգ եկեղեցւոյ Մողնւոյ: Եւ այսպէս կարգադրեալ պատուիրեցաք Սինօղի միով բաժնիւ գնել յատուկ զկալուած ինչ յանուն ս. Էջմիածնի և ի նպաստ ծախուց ս. Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյս և երկրորդմբ մասամբն այս է իւրեք հաշիւս և իւրեք հաշիւս և երեք հաշիւս և հինգ ուրբաք տալ գնել յանուն Մողնւոյ ս. Գէորգ եկեղեցւոյ զկարեւոր կալուածս և զտարեկան արդիւնս վերջնոյն ի ձեռն երեցփոխանի կամ հոգաբարձութեան ըստ համաձայնութեան և կարգադրելոյ ժողովրդեան կիսել յերկուս բաժնիս հաւասարապէս և յիւրաքանչիւր ամի անխափան հատուցանել զմինն ի պէտս և ի նպաստ ս. Գայիանեան օրիորդական հոգեւոր վարժարանի և զմիւսն տալ ի պաշտօնադրամ միաբան քահանայից և պաշտօնէից ս. Գէորգ եկեղեցւոյ Մողնւոյ միայն զորմէ պատուիրեմք և ձեզ յատկապէս: Եւ ըստ այսլմ երեցփոխանն կամ հոգաբարձութիւն ս. Գէորգ եկեղեցւոյ Մողնւոյ յիւրաքանչիւր ամի անխափան ընկալեալ զտարեկան արդիւնս եկամտից կալուածոցն հանցէ ի գումարէն նախ վերջաւան ըրուելիս զմոմագին ծախս ի պէտս աւուրն և հանդիսի հոգեհանգստեան վասն հոգւոյ բարեյիշատակ Սողոմոն Պապէի Ժողովեցւոյ ապա զմնացեալ գումարն հաւասարեցն

յերկուս մասունս առ ի յանձնել զմինն ի նպատտ ս. Գայիանեան օրիորդաց վարժարանի ի ձեռն հոգաբարձուաց կամ վարչութեան վարժարանին, և զմիւս բաժինն վճարել ի նուէր միաբանից Մողնւոյ վասն կառարկոյ զպաշտօն և զսուրբ պատարագ ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ Սողոմօն Պապէի, Իսկ միաբան քահանայից եկեղեցւոյ պատուիրեմք յատկապէս մատուցանել հանդիսիւ մեծաւ զսուրբ պատարագ յիւրաքանչիւր ամի անխափան յաւուր տօնի ս. Համբարձման Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և կատարել ի մէջ սուրբ եկեղեցւոյ Մողնւոյ ըստ արժանւոյն և հանդիսակցութեամբ համախմբեալ ժողովրդեան զպաշտօն հանգստեան ի փրկութիւն հոգւոյ և ի յիշատակ Սողոմօն Պապէի, ուր անշուշտ ներկայ գտանիցին և աշակերտուհիք ս. Գայիանեան օրիորդաց հոգեւոր վարժարանի, Միանգամայն պատուիրեմք սկիզբն առնել կատարելոյ զկարգադրութիւն մեր զայս ի յառաջակայ տօնէ մեծի աւուր Համբարձման Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ի քսանեկններորդ աւուր մայիս ամսոյ ներկայ 1880 ամի, աւուրը յառաջ ծանուցանելով ժողովրդեան և վարչութեան ս. Գայիանեան օրիորդական հոգեւոր վարժարանի:

Արդ զայս ամենայն կարգադրեալ այսպէս հաստատեմք այսու Հայրապետական Առնդակաւ մերով, զի յիշատակ հանգուցեալ Սողոմօն Պապէի մշտնջենաւորապէս փառաւորեցի արդեամբք և ճշմարտութեամբք, ի զինուորեալ եկեղեցւոյ բարեմաղթութեամբ, և եկեղեցին Անդրանկաց վերին Միօնի ընդ դասս երանելաց պարակից լինելով:

Որք երկնաւորին ակն ունին զերկնայինն խորհին և զկեանսն իւրեանց վասն երկնից պատրաստեն, քանզի երկնային մեծութիւնն որ անանց է և մշտակայ, զրաւեալ է զսիրտս այնպիսեաց, քաջ իսկ կշռեալ զանցաւոր կենցաղոյս զունայնութիւնս որք են ոչ միայն ինքեանք կորստականք, այլև որ սերտ իմն շաղկապեալ են ընդ նոսա իմա ընդ ունայնութեանց սրտիւ և հոգւով թաւային ի յաւիտենական կորուստն: Ի սոյնպիսի հանդէս խորհրոց առաքինացաւ այրն այն գովելի Սողոմօն Պապէ, որ զիտաց անցաւորօքս աշխարհի փոխանակել զմեծութիւն երկնից, որով և մարթէ և մահկանացուի անմահանալ զարաւոր ժամանակօք ի կենցաղումս յիշատակաւ անուան անկշռելի երախտօք: Իցիւ արդեօք, զի և ամենայն դք հաւատացեալ ի Յիսուս Քրիստոս և աւաղանաւ սրբութեան որդեգրեալ Հօրն երկնաւորի, որով և հրաւիրեալ ի փառս Որդւոյ նորա Միածնի, սուրբ նպատակաւ այսպիսեաւ վառեալ բորբոքէր ի փառաւորել յանձն և ի գործս իւր զԱստուած: Զի թէ և ամենեքին կոչեցան, այլ սակաւք ոմանք են որք ընտիր զանձինս ցուցանեն ի կոչումն հաւատոյ, կոչումն Աստուծոյ, որ ընթանալոյ է նշանակ, առաքեալն Պօղոս յանդիման կացուցանէ օրինակաւ ընթացելոց յաստարկի, ամենեքին, ասէ, ընթանալ ընթանան, այլ մի դք առնու զսոսկն, և այս վասն այնորիկ, ասէ, զի ոչ բարւոք ընթանան, կոչեցեալք թէ և ընթանան, այլ մեղկ սրտիւ և կեղծեալ սիրով, առաւել հակամէտ ուր ենն, քան յոր կոչեցանն:

Արդ զայս ամենայն խորհելով հանապազ և յայսպիսի յոյս հաստատելով զսիրտս ձերս սիրելի որդեակքս մի՛ անփոյթ լիջիք և դուք զբարեացն, զմտաւածեալ զանցաւորութիւն երկրաւորիս, բուռն հարջիք շահել նոքօք զկեանս ձերս օրինակ կալեալ զաստուածահաճոյ և զբարեպաշտ անձինս մանաւանդ զարժանին յիշատակաց և զանմահացեալն հոգւով և յիշատակութեամբ զՍողոմոն Պապէ, որոյ գործք և յիշատակք օրհնեալ են յԱստուծոյ, և փառաւորելոց են միշտ ի զինւորեալս եկեղեցւոջ։

Ի միտ առջիք զի և դուք ի կոչեցելոց և ի հրաւիրելոցն էք յերկնային հարսանիս Թագաւորին Քրիստոսի, և ցորչամի էք ի մարմնի աստ, պատրաստեցիք ձեզ զհանդերձս բարեաց գործոց արժանաւորս այնր ուրախութեան, զի երանելեացն և դուք գտջիք հանդիսակիցս. որում Տէր Յիսուս արժանի արասցէ զամենեանսդ զձեզ. և զպատուեալն և զփառաւորեալն ի միջի ձերում՝ զհոգի հանգուցելոյն Սողոմոն Պապէի պայծառացուցէ երկնային փառօք և աստուածային տեսութեան լուսով փայլեալ յարքայութեան իւրում։

Օրհնեցէ Տէր Աստուած զամենեանսդ զձեզ, և հոգւով զօրութեան իւրոյ զօրացուցէ ի գործս բարիս, կեալ անարատ կենօք և աստուածահաճոյ կենցաղավարութեամբ, լցեալ պաղովք բարեաց առաքինութեան և ջերմեռանդն սիրով առ Աստուած և առ երկնային մխիթարութիւնն, զի արժանի լիջիք և դուք փառաւորութեան սրբոց և սիրելեացն Աստուծոյ։

Ողջ լիւրութ և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ. Ամէն։

* * *

Մայիսի 21ին փառաւոր հանդէսով տօնվեցաւ Ս. Էջմիածնում Հայաստանի եկեղեցու Մեծ Հայրապետի, Աւհարառ Վաթոյկեոսի Օծման ԺԳ. տարեդարձը։ Մայր Աթոռիս միաբանութիւնը նախընթաց երեկոյի ժամասացութեանից յետոյ մեծահանդէս նախատեսակ կատարեց։ Տարեդարձի օրն առաւօտեան մեծահանդէս ժամերգութեանից յետոյ, Տ ժամին առաքի զանգակը ծանոց միաբանութեանը, աշակերտներին և ժողովրդին ի շնորհաւորութիւն գնալու ժամը։ Սովորական կարգով միաբանութիւնը շարվեցաւ Աւհարանի լուսամուտների առաջ արեւմտեան կողմից կիսաշրջան կազմելով։ Միաբանութեան առաջ շարվեցան երգեցիկ աշակերտները նոյնպէս կիսաշրջան կազմելով։ Հարաւային կողմից կանգնած էին ճեմարանի աշակերտները և հիւսիսային կողմից Մ. Աթոռիս Ժառանգաւորների հին ուսումնարանի աշակերտները։ Փոքր ինչ հեռու շարված էին Վաղարշապատ գիւղի օրիորդական վարժարանի աշակերտուհիներն իւրեանց արդիւնաւոր վարժուհի օրիորդ Մամիկոնեանի հետ և արական զոյրոցի աշակերտներն իւրեանց ուսուցիչներով։ Երբ տօնի Աւհարառ Հեղինակն երեւցաւ վեհարանի լուսամուտի մօտ, սկսվեցաւ մաղթանքը։ Մաղթանքի միջոցին երկու ճառ կարդացվեցան, մին — միաբանութեան կողմից և միւսը — ճեմարանի աշակերտների կողմից, այլև մի ուղերձ չափածոյ գրված նոյնպէս աշակերտների

կողմից, Մաթթանքից յետոյ միաբանական ուխտը մտաւ վեհարան Աւհափառ Հայրապետի Աջը համբուրելու:

Քաղցր մխիթարական և իմաստալի խօսքերով բարեհաճեց օրհնել Աւհ. Տէրը Մայր Աթոռիս միաբանութիւնը զրաբար օճով: Սորա էին ահա այն անմոռանալի խօսքերը. « Կինդրեմ յԱմենակարծող Աստուծոյ, որ շատ տարիներ բարեբաղդութեամբ խաղաղութեամբ և ուրախութեամբ տօնենք այս օրը: Այսօր, որ ԺԳ. տարեդարձն է Օծման Կաթողիկոսութեանս: Նորից Աստուծու առաջ ուխտ անենք ամենքս և իւրաքանչիւրն իւր տաշտօնը սրբութեամբ և անթերի վարելու: Ուխտ կապենք այնպիսի մարդավարի կենցաղավարութեամբ ապրելու, որ մեր սեպուհ պարտքերը կատարած լինինք խղճիւ և առանց ամօթի լինինք Աստուծու խղճմտանքի և ազգի առաջ, ամէն: Ասացէք ամենքդ ամէն: Եւ բոլոր միաբանութիւնը սրաի խորքից կրկնեց ամէն: Միաբանութեան մէջ էր և գեր, Հմայեակ Ա. Դիմաքսեանը (Լոյս ամսագրի նախկին խմբագրող), որը եկած է Երզնկայից Ս. Էջմիածին Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանանալու: Աւհ. Կաթողիկոսն յանուանէ յառաջ կանչեց նորան իւր մօտ և ասաց. « Ես շատ մխիթարված եմ քեզնից: Ես ինքս միշտ աշխատած եմ զպրօցների մասին երիտասարդութենիցս: Խասգիւղ, Միջագիւղ, Կ. Պօլսի և Բրուսա քաղաքի բարձր ուսումնարան, բայց ոչ գիշերօթիկ, ինչպէս այստեղ Ս. Էջմիածնում կատարեց Աստուած իմ փափագը: Մինչդեռ դու նոր առաջնորդ գնացած արդէն կարողացած ես երեսուն աշակերտի գիշերօթիկ զպրօց բանալ և պահպանել: Ուստի ահա կպարգեւեմ քեզ այս խաչը, որ պիտի կրես ոչ ի սնանփառութիւն միայն, այլ քո վաստակներիդ վարձատրութիւն: Կշնորհաւորեմ քեզ: Եւ այս ասելով Ինքն իւր ձեռով բարեհաճեց ականակօւռ խաչ ձգել գեր, Հմայեակ Աւարդապետի վրին: Աւհափառ Կաթողիկոսի հրաւերով բոլոր միաբանութիւնը շնորհաւորեց նոյնտեղ Հայրապետական շնորհը:

Մխիթարական է տեսնել, որ Աւհ. Հայրապետն այսպէս հանդիսարար վարձատրեց տղգային դաստիարակութեան ասպարէզում աշխատող արժանաւոր մշակին:

Միաբանութենից յետոյ մօտեցան ի համըլլը Ս. Աջին Ճեմարանի աշակերտներն և ուսուցիչները: Աւհ. Հայրապետն այս խօսքերով բարեհաճեց մխիթարել աշակերտներին. « Կցաւիմ, որ տկարութիւնս կարգելէ ինձ յաճախել Ճեմարան, սակայն կլսեմ, որ աշակերտները լաւ են և քննութիւնները յաջողութեամբ կշարունակեն: Այս կհամարեմ իմ փառք և կմխիթարվիմ: Կյուսամ, որ ուսուցիչներն առաւել աշխատելու են և առաւել յառաջագեմ պիտի լինի Ճեմարանը: Կմաղթեմ որ ամենակարօղ Աստուած զօրացնէ աշակերտներին և ուսուցիչներին: »

Յետոյ մօտեցան Աղարշապատի երկսեռ զպրօցների աշակերտուհիներ, որոնց վարժուհին Ճառ մատոյց և աշակերտները, որոնցից մին նոյնպէս Ճառ մատոյց Աւհափառ Հայրապետին, և այնուհետեւ պաշտօնակալներ և ժողովուրդը:

Նոյն օրը զանազան տեղերից հեռագիրներով շնորհաւորելով Հայրապետական տօնը, ցանկացած էին շատերը տօնակից լինել:

Մեծահանգէս ս. պատարագից յետոյ, որին ներկայ լինել չկարողացաւ Վեհ. Տէրը տկարութեան պատճառով, Աթոռիս սեղանատանը պատրաստված էր ճաշ, որ պատուել իւրեանց սեղանակցութեամբ հրաւիրվեցան պաշտօնակալներ և ժողովրդականներ, նոյնպէս և Նրեանից եկած Պարոններ: Սեղանը զարդարված էր դալար ծիւղերով: Վեհափառ Հայրապետի կենաց թասը ճառով, հրացանաձգութեամբ և երգով առաջարկվեցաւ: Ճաշին ճառախօսեցին Սերովբէ Եպիսկոպոսը, Հմայեակ Վ. Դիմաքսեանն և Պ. Երիցեանը: Հանդիսականներին ճաշը կվայելցնէին իւրեանց ներգշնակ երգերով Աթոռիս ժառանգ. հին ուսումնարանի աշակերտներն, որոնք սեղանակից էին ի հարկէ:

Երեկոյեան Մայր Աթոռը ճրագավառված էր և ճեմարանի աշակերտներն կերգէին Վեհարանի առաջ մինչև 9/ ժամ:

* * *

Սա է Վեհափառ Աթոռիկոսի Օծման տարեգործին ճեմարանի աշակերտների կողմից կարդացած ճառը, որ ասաց Ձ. դասարանի աշակերտ Ստեփ. Վանայեան, որը կարօղ էր կարդալ արդարեւ իբրեւ ճեմարանի աշակերտների ներկայացուցիչ թէ իւր ուսմամբ և թէ մանաւանդ իւր վարքով:

ՎԵՀԼՓԸՌ ՏԵՐ.

Մեծ է աւուրս յիշատակ, զի այս օր մի յաւուրց տարեկանաց է, յորում աջ Բարձրիւղյն քնտրեաց զարժանքնախրդ ի հովուութիւն իւրոյ հօտին և յորում սկիզբն եղև վերանորոգութեանց. և է՞ ինչ առաւել քաղցրագոյն քան զյիշատակ այսպիսի, յիշատակ որ սփոփեցէ զմայր-Հայաստան, որ ցանկալի որ և միանգամայն յիշեցուցանէ հայորեւոյն զարարիս իւրեանց. և մեք որդիք նոցունց ազգեալ ի ներքուստ դամբ ի համբոյր հայրենասէր Աջոյդ և յայտ առնել Բեղ Վեհիդ, թէ ոչ երբէք ի մոռացօնս արկցուք զգործսդ և մի՛ լիցի մեզ երբէք ի բաց արկանել ի մտաց զՎեհ անունդ, այլ ամրագոյն զրոշմել զայն ի խորս սրտից մերոց և զնոյն անջինջ պահել ցորչափ ոգիք մեր ի մարմնի մերում իցեն:

Ահա այսու որդիական զոգցմամբ խնդրեմք յԱստուծոյ և խնդրեսցուք յարաժամ վասն երկար ժամանակաց Չերոյ, զի վայելեսցեն յաւուրս Հայրապետութեանդ ազգս Հայոց և որդիքս նորին զշնորհս և զբարիս Չեր:

Վեհափառ Տէր, քաղցր է մեզ աւուրս յիշատակ մանաւանդ այնու, զի կարացաք գէթ համառօտ բանիւ զերախտադիտութիւնս մեր յայտ առնել Չերում Վեհափառութեան. և թէև բազում անգամ դեռ եղև մեզ յայտ առնել զայս, այլ կրկնութիւն ջերմ զգացմանցս մի՛ ինչ անախորժ և տաղաւալի թուեցի ի լսելիս Վեհափառութեանդ, քանզի բազմադիմի են շնորհք որ առ մեզ վասն որոյ և երախտադիտութիւն որդեցոյ անսահման է, զոր և զրիչ փորձառու զայրի և ճարտարի ոչ կարէ ի զիր զրոշմել զայն բանիւ: Մեք որդիք Չեր ցանդ յայտ խորհեալ բիւր երանիս կարգամբ աւուրն այն:

միկ յորում զործով ցուցցուք զբանիցս ճշմարտութիւնն որում անձկալով ընձան սիրտք մեր վառեալ անձախական հրով երախտադիտութեան:

Այլ արդ յայտմ սքանչելահարաշ աւուր խնդրեմք ի Զէնջ, Աստուածընտիրդ Հայրապետ աղօթս առնել առ Հոգին սուրբ առ Տախչն երկնածիր շնորհաց, զի զեղցէ ի մեզ զշնորհս իւր և լցեալ վառեացէ զմիտս մեր լուսով գիտութեան, որով զարգացեալ ի հրահանգս ուսմանց բեղմնաւորեալ արդասարեր լիցօք և կարողք ի կատարել և ի յանգ հանել զիղձս Միծի Հայրապետի:

* *

«Առվկասեան Հնութիւն» վերնագրով ուսերէն ամսագրի նախկին խմբագրող «Փորձ» ամսագրի աշխատակից և հնագիտութիւն ուսումնասիրող մեծ Պ. Ալէքսանդր Երիցեանն եկաւ Ս. Էջմիածին և Առվկասեան Հնագիտական Ժողովի նախագարաստական յանձնաժողովի նախագահ Ժէնէրալ Աամարովի յանձնարարական նամակով ներկայացաւ Աւհափառ Հայրապետին խնդրելով, որ Նորին Աւհափառութիւնը լծոյլատրէ Էջմիածնի մաքաներից և ճեմարանի ուսուչիչներից մասնաժողով կազմել Հայաստանի հնագիտական հետազոտութիւններին զործակցելու: Աւհափառ Հայրապետն ամենայն համակրութեամբ ընդունելով Պ. Երիցեանի խնդրը բարեհաճեց առաջարկել նորան ներկայացնել մասնաժողովի նշանակելի անդամների ցուցակ և առանձին զրոյթեամբ պատասխանեց Ժէնէրալ Աամարովին ծանուցանելով իւր ուրախութիւնը որ Հնագիտական ընկերութիւնը կհետեւի Հայաստանի հնութիւնները հետազօտել և աշխարհին ծանօթացնել, մանաւանդ որ կկարծէ թէ Հայաստանի հնախուրդական հետազօտութիւնները նոր լոյս պիտի ձգեն ընդհանուր պատմութեան հին դարերի բանի մի երեւոյթների վերայ:

Աստի և Նորին Աւհափառութիւնը խոստացաւ ըստ կարելոյն օգնել պ. Երիցեանի ազգօգուտ զործին: Եթէ հնագիտական Յանձնաժողովն իւր օգտաւէտ և համակրութեան արժանի նպատակին հասնէ և հաստատվի բոլորովին, հրատարակելու ենք նորա պարապմունքի պրօգրամը:

* *

Մայիսի 22ին Պէտէրբուրգում վախճանեցաւ Պայսերուհի Մարիա Ալէքսանդրովնան: Աւհափառ Հայրապետը հետագրով յայտնեց իւր խորին ցաւակցութիւնը Թագաւոր Պայսերն ներքին զործերի նախարարի միջոցով: Այլ և պատուիրեց որ 23ին կիրակէ օրը մեծահանգէս պատարագ մատուցանվի հանդուցեալ Պայսերուհու հոգու փրկութեան համար: Ս. Պատարապից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեցաւ որին ներկայ լինել բարեհաճեց և ինքն Աւհ. Տէրը: շնայելով իւր արգելադրութեամբ և հրամայեց Խորէն Աւրդապետին հոգեհանգստի միջոցին ծանուցումն անել Պայսերուհու մահի մասին: 28ին ևս կրկին հոգեհանգիստ կատարվեցաւ Պայսերուհու նոյն օրը թաղվելու պատճառով: Աւհափառ Աթոռակոյտը մանաւանդ կյարգէր հանգուցեալ Պայսերուհու դպրոցասիրութիւնը: Գրեթէ բոլոր օրիորդական գիմնադիօններ և զանազան վար-

չութիւններէ վարժարաններ նորա բարձր հովանաւորութեան ներքոյ կը գտնվէին և հարիւրաւոր մանուկներ կը բնակէին նորա անձնական հաշով։ «Առկառու» քրիստոնէութիւն տարածելու ընկերութեան» և «Ռուսական քարոզչական ընկերութեան» և «Մօսկվայում» Եղբայրութեան ընկերութեան» և այլն հաստատութիւնները սերտ կերպով կապված են նորա անունի հետ։ Բայց ամենանշանաւոր անմոռանալի ժառանգութիւնն որ թողեց հանգուցեալը ուսական տէրութեանը և ազգին։ «Արմիր Խաչ» էր վիրաւորված և հիւանդ զինեորներին խնամող ընկերութիւնը։ Այս հաստատութեան հետ հանգուցեալ Ապսերուհու անունը անցնելու է ցեղից ցեղ և դարից դար Ռուսիայում նորա երախտագէտ յիշատակը ամենահեռաւոր սերունդներին մէջ օրհնութեամբ պահպանելով։

Խմբագրութիւնս խորին շնորհակալութեամբ ստացաւ մեծ. Պ. Էմինից ուսերէն թարգմանած Փրկչի պատկերի նոր գտած նկարագրութիւն։ Այս նկարագրութիւնը նման է Պաւլիոս Լէնտուլոս փոխհիպատոսի նկարագրութեանը որ իբր մատուցած է նա հռոմայական ծերակոյտին։ Չեռագիրը որից քաղած է մեծ. գիտնականը նկարագրութիւնը ստացել է Քէշիցի Աւերբաքանից կրեւի որ նա գրված է Հնդկաստանում Լազօր քաղաքում 1030 ազդարկն թուականում այսինքն 1581 թ. Յովհաննէս քահանայի ձեռով։ Այս նկարագրութիւնը Յիսուսին հրաշալի գեղեցկութեան տէր կներկայացնէ մինչև մի կնոջը ժողովարանում Յիսուսին երկար ուշի ուշով նայելուց ուշաժամի լինելը։ Պ. Էմին իւր ուսերէն թարգմանութիւնը հրատարակել է Православное Обозрѣніе ամսագրում։

Խմբագրութիւնս խորին շնորհակալութեամբ ստացաւ գեր. Արիստակէս Ա. Սեդրակեանից հայերէն թարգմանած Զօն Ալիլիամ Գրէպէրի Եւրօպայի մաւաւոր զարգացման Պատմութիւն։ Շատ միտմարական երեւոյթ է այսպիսի մի հեղինակութեան թարգմանութիւնը մեր գրականութեան մէջ որի համար մեր գոհունակութիւն կ'այայտենք գեր. թարգմանչին։ Լեզուն կանոնաւոր է թէև երբեմն միութիւն շատ ճիշդ պահպանված չէ. կենդանեաց և կենդանիների որոնց և որոց իւրեանց և իրանց և այլն ձեւերը կ'պատահին։ Իսկ թարգմանութեան մասին ընդհանրապէս ասելու է որ ուսական լեզուի ազդեցութիւնը բաւական շատ զգալի է ինչպէս Ռուսահայերիս գրութեան մէջ առհասարակ։ Ահարձենք որ եթէ բայերը նախադասութեան վերջը դրվէին, ոճն աւելի հարադատ կլինէր։ «Պատասխանը պէտք է խնդրել պատմութեան փոխտոխայական հետազօտութեան մէջ» — ամենայն ահարկուն կարօղն և մեծը դարհուրանքով լցնում են նորա երեւակայութիւնն — տեղի են տալի ընդունելու այդ լուսաւոր մարմինների ամէն մէկի մէջ կենդանի և կառավարող ոգի — ուսումն օրէնքով կառավարուելու վերայ — ոչ միայն երեւցան անօգուտ հասարակութեան համար» և այլն և այլն այսպիսի ոճերը մութ են և խորթ։ Անհասկանալի տեղերն ևս շատ կան. «Այս կերպով մէկը միւսին հետեղ» և փոխա-

դարձարար մէկը միւսին իրրե պատճառ դէպի գործողութիւնը յարարերող բնական ազդեցութիւններն իրանց ամբողջի մէջ վերաբերումն դէպի ամբողջ գործարանական աշխարհն, իրրե պատճառ դէպի երեղթն և նոցա մէջ գանձած փոփոխութեանց կարգն անդրադարձուումէ և մարմնանումէ գործարանաւոր աշխարհի մէջ : Դժուար թէ այս կտորը որ մին հեշտութեամբ հասկանայ : Շատ տեղն ևս բառական է թարգմանութիւնը : Եւրաքանչիւր քարանձաւի մէջ բնդունումէ մի սգի : — գործերը սկսան ստեղծուիլ սակաւ մանկ հաւասարակշռութեան կամ հանդարտութեան վիճակն ոչ միայն ընկերական, այլև բնախօսական յարաբերութիւններով : (Въ отношеніи), վերջին բառը թարգմանելու էր հայերէն կողմից կամ նկատմամբ կամ վերաբերմամբ բառով : «Հետզհետեական» և սոյն կերպով անանցիվ բառերն ևս խորթ կերակրին :

Նկատելու է, որ տպագրութեան արտաքին պայմաններն անյաջող են : տառերը մեծ մասամբ վատ են տպված, երբեմն ևս բոլորովին դուրս եկած չեն : տեղ տեղ ամբողջ բառեր չեն կարդացվում : Սրբագրութիւնն ևս մաքուր չէ :

Վյուսանք, որ այս թերութիւններից երկրորդ տպագրութիւնը ազատելու է դեր : թարգմանիչը և Գրէպէրի «Եւրօպայի մտաւոր զարգացման Պատմութիւնը» հայկական դրականութեան զարդ պիտի դառնայ :

* * *

Մեծ. Պ. Երիցեանը նուիրեց Ճեմարանի մատենադարանին իւր սուսերէն հրատարակած «Վովկասեան Հնութիւն» վերնագրով ամսագիրը և իւր հեղինակած վեց կտոր զբոբդներ :

* * *

Թիֆլիսցի Ներսէս քահ. Վամագեան, որ այս օրերս քանի մի օր իրրե ուխտաւոր անցոյց Ս. Էջմիածնում, խոստացաւ որչափ կենդանի է տարեկան 10 մանկէ Նուիրել յօգուտ Ճեմարանի, ներկայ դպրոցական տարվանը արդէն վճարելով :

* * *

Թեղավեցի Յովսէփ քահ. Տէր Յարութիւնեան, ուղարկելով Խորէն Վարդապետին 10 մանկէ Ներկայ տարվան համարի գրով յայտնած է իւր ցանկութիւնը ցմահ իւր տարեկան 10 մանկէ Նուիրել յօգուտ Ճեմարանի : Վեհափառ Վաթոյկոսը օրհնելով Նուիրատու քահանաներին պատուիրեց սովորական մատենի մէջ մուծանել :

* * *

Խմբագրութիւնս հետեւեալ նամակը պ. Ա. Հ. իցստացաւ : «Վաղուց է որ «Մեղու Հայաստանի» լրագրի 40 համարի առաջնորդող յօդուածի նման միևնույն կերպով զրուածք չէինք կարդացել մեր լրագիրներին մէջ : Եւ որովհետեւ հարցը Հայ եկեղեցւոյ Նշանակութեան մասին է, ուստի թող տուք մեր զգացմանց թարգման լինի կրօնական Արարատ ամսագիրը : Հետեւեալ խօսքերը որոնք զուտ ճշմարտութիւն են, ամեն մի Հայի սրտի խորքում ծածկուած խոստովանութիւն կարող են համարուիլ : «Այդ ա-

ւետարանականները չեն խղճահարկում մինչև անգամ հայ քրիստոնէական մարտւոյ եկեղեցին հեթանոսական անուանելու ինչպէս տեսնումենք Գուայայի գրքի մէջ, որ ամբերկական գլխաւոր քարոզիչն էր Տաճկաստանում: Հայ եկեղեցին այն ժամանակ աւետարան ունեցել է և իւր ժողովրդեան առաջ դրել է, երբ այդ քարոզիչների հաւերը անտառներում վայրենի դաժանների պէս ապրումէին: Նա թէ սուրբ գիրքն ունի և թէ նորա պատգամները չէ ծածկում իւր ժողովրդից, ի՞նչու այդ նոր դարիս առաքեալները հեթանոսներն և մահմետականները թողած հայ եկեղեցու զաւակներին են դիմում, որ թէ փառաւոր անցեալն ունի քրիստոնէական եկեղեցու պատմութեան մէջ և թէ հին քրիստոնէական եկեղեցիներից ամենազատամիտն է և ժողովրդականը: Արովհետեւ հայ ազգը խղճի ազատութիւնն չափազանցութեան է հասցրել և թող է. իսկ հեթանոսք և մահմետականք հալածասէրք են և զօրեղ, իսկ նոր քարոզիչները մեղկ և թույլ մարտիրոսանալու համար: »

Այս յօդուածի գլխաւոր կէտերը Հայաստանի եկեղեցւոյ պատմութեան փառաւոր երես կարող են կազմել: Այնքան ճշմարտութիւն կայ խօսքերի մէջ, որոնք Հայ եկեղեցւոյ բուն ոգի են նշանակում: Ար հայն օրինակ պատրաստ չէ հարիւր անգամ կրկնել յարգելի խմբագրութեան հետ այս խօսքերը:

« Իրաւ է աւետարանը պարտք է գնում ամեն քրիստոնէի վերայ քարոզելու, բայց ոչ քրիստոնեաներին, այլ հեթանոսներին: Թող այդ լուսաւորեալ քարոզիչները մեզ հայերիս գիտութիւն և արհեստ ուսուցանեն, որ մեր քաղաքական, տնտեսական և կրօնական վիճակը մեր մէջը բարեկարգենք ու բարելաւենք, նոցա փէշերը կհամարուրենք: Բայց ի՞նչպէս սիրենք նրանց, երբ նոքա գիտութեանց փշրանքը մեզ վերայ հաւատափութութեան գնով են ծախում: Մենք մինչև անգամ ներումենք նրանց իրանց կրօնական համոզմունքը քարոզելու այն հայերին, որոնք կարող են բռնել զէնքն, ունին զարդացումն և քննողական կարողութիւն, բայց ոչ խեղճ տգէտ ամբոխին, որոնց հաւատը կոյր է և չէ հիմնված համոզմունքի վերայ: Նա աւետարանական անունն ընդունումէ, նոյնպէս կոյր է, նոյն աղէտն է: Ի՞նչ օգուտ նորա հոգուն երբ նա մի կուրութիւնից միւսն է անցնում: Միայն անունն է փոխում, փոխելով դորա հետ և իւր ազգութիւնը (մեր խօսքը բաղմութեան վերայ է և ոչ բացառական անձնաւորութեանց): Պօղոս առաքեալն իւր ազգի համար ի դժոխս իջանել ցանկացաւ. իսկ մեր նոր առաքեալներն ազգութեան թիւնն են գործել տալիս: Անզգիան ազատ երկիր էր և է, այնտեղ խղճի ազատութիւն էր, ամեն մարդ ազատ կարող էր զաւանել իւր կրօնը, բայց այդ ազատութիւնը չբնօրէնց այն օրէնքն, որ թող էր տալիս տէրութեան մէջ պաշտօններ ստանալու միայն եպիսկոպոսական եկեղեցու անդամներին, ամեն այլ եկեղեցեաց զաւակներին զրկելով այդ իրաւունքից: Եւ այս վիճակը տեսց մօտ 400 տարի: Թող հայ ազգն էլ իւր լրութեամբ հասնի քաղաքակրթութեան և զարգացման այն աստիճանին, որ ամեն հայի համար պարզ լինի

ազգայնութեան և կրօնի հարցն, այն ժամանակ թող կատարեալ ազատութիւն լինի նորա մէջ քարոզելու ինչ կրօն կուղեն: Բայց այդ վիճակը շատ հեռու է դու ևս հայ ազգից: որոյ ազգայնութեան ամբողջութիւնը, քաղաքական անկախութեան և զարգացման պակասութեան պատճառով, լոկ եկեղեցու մէջ է ամփոփւած . . . Հայի կողմից այդպիսի անհոգութիւնն ոչ թէ ներդաժմութիւնն այլ անտարբերութիւն և ամարդութիւն պիտի լինէր, չպաշտպանել այն, որ իւր միակ թանկագին ժառանգութիւնն է:»

Աշխարհումս տեսնումենք, որ քանի քաղաքակրթութեամբ մի ազգ, այնքան աւելի յարգանք է մատուցանում իւր եկեղեցւոյն: Թէ Անգղիայի պէս քաղաքակրթութեամբ երկրում եկեղեցին որքան մեծ նշանակութիւն ունի այժմ ևս, ցոյց տուին վերջին օրերս այս մայիսի 31 ին Լոնդոնի Բրէզլու պատգամաւորի երդմեցնելու մասին, որոյ երդումն ոմանք անյարմար համարում նորա ազատամիտ լինելու և իւր կրօնական համոզմունքով Անգղիայում տիրող եպիսկոպոսական եկեղեցւոյն չպատկանելոյն համար: Շնորհակալութիւն յայանելով «Մեղու Հայաստանի լրագրի խմբագրութեանը այս ազգասիրական մտքերի և զգացմանց համար, կցանկայինք և կխնդրէինք, որ այս ուղղութեամբ իւր լրագիրը փափագելի և յարգելի առնէ ընթերցողաց առջև, ինչպէս էր երբեմն, և ոչ թէ անդադար յարձակումներով, որոնք արդէն յագեցրին մեզ, եթէ լրագիրը կամենումէ ժողովրդական լինել, պէտք չէ ժողովրդեան սրբութեանը ձեռնամուխ լինել: Ժողովուրդն սկսումէ հասկանալ, որ մեր լրագիրների անդադար ի դէպ և ի տարադէպ յարձակումները սառնութիւն և անտարբերութիւն են արմատացնում դէպի եկեղեցին:»

Խնդրումեմ խոնարհաբար մի անկիւն շնորհել այս իմ նամակիս Արարատ ամսագրում, որով և այլն:»

Խմբագրութիւնս այս նամակը ստացաւ, երբ արդէն սկսւած էր ազգային տեսութիւնը, Ուստի երկար չյետաձգելու համար ազգային տեսութեան մէջ զետեղեցինք:

Իւրաքանչիւր հայ սրտի համար մխիթարական է ի հարկէ լրագրի այսպիսի խորհրդաւոր և հասուն դատողութիւնը, որ հիմնւած է հայկական էթիկէ- և -դէ-մո-լէ-ն խորին ուսումնասիրութեան վերայ: «Արարատը» կձայնակցէ «Մեղու Հայաստանի» լրագրի մտքին, որ հայկական ազգը երբէք թող տալու չէ խել իւրեանից -դէ-մո-լէ-ն էթիկէ-դէ-մո-լէ, որի իւրաքանչիւր քարը նահատակի մարմին է և որի կիրը մարտիրոսների արիւնով է շաղախւած:

Իսկ «Մշակ» լրագրի վերաբերմամբ շնք երկրայում, որ իւր ջերմեռանդութիւնը և ազգասիրութիւնը ստիպելու են մի օր լրջմտաբար և հեռատեսաբար մտածելու և դաւանելու թէ Հայաստանի եկեղեցին ինչ կենսական նշանակութիւն ունի այն ազգի համար, որին նա ինքն շատ ծառայութիւններ մատուցանել կցանկայ:

Ահափառ Հայրապետի անօրէնութեամբ մայիսի 13ին սկսվեցաւ և 17ին

վերջացաւ Մայր Աթոռիս ժառանգաւորներէի հին ուսումնարանի տարեկան հարցաքննութիւնը:

Առարկաներն էին: Կրօն: Հայկական և ռուսական լեզուներ: ազգային պատմութիւն: թուարանութիւն: ձայնագրութիւն և վայելչագրութիւն: Հայերէն և ռուսերէն:

Հարցաքննութիւնը միաբաններէի և ձեմարանի ուսուցիչներէից ոմանց ներկայութեամբ եղաւ և աշակերտներէի յաջող պատասխաններէից յայտնվեցաւ որ ուսուցիչներն աշխատած են բարեկեղծարար իւրեանց պաշտօնը կատարել:

* *

«Ասէմիւրնայեա Իլլւստրացիա» (Всемирная Иллюстрація) շաբաթագրի մայիսի 17 համարում շատ սիրուն նկարված էր Ա. Ե. Տափառ Աթոռիկոսի ն. Կ. Մ. Թագաւոր Վայսերն ընծայած Ս. Ա. Լեւոնտանի զարդարված կազմը: Նկարն իմաստալի բացատրութիւններով է: Այլ բացատրված է նախ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածումն: յետոյ ասված է որ Տրդատ թագաւորի գործակցութեամբ Գրիգոր Լուսաւորչի շինած Էջմիածինն այնուհետեւ Հայկական ազգի վեհափառ պատրիարք կաթողիկոսների աթոռանիստ դարձաւ: Հայրապետական աթոռի ծախսերի համար թագաւորը քանի մի նահանգներ պարզեց: Սուրբ Գրիգորի և նորա մերձաւորացի յաջորդների օրով Հայկական եկեղեցին իւր վերջնական կազմակերպութիւն ստացաւ: որ համաձայն է առաքելական կարգադրութիւններին և աւանդութիւններին: Ժողովուրդն անմիջական մասնակցութիւն ունի եկեղեցու գործերին և նոյն ինքն հայրապետին ժողովուրդը կընտրէ:

«Արօնական մարտիրոսութիւնը Հայերի պատմական կեանքի զլխաւոր տարր է: որոնք մինչեւ այժմ քրիստոնէութեան և քրիստոնէական քաղաքակրթութեան նախապահապան են Ասիայում: Հայերը բազմադարեան կոիւնքի մէջ պահպանեցին իւրեանց եկեղեցու անկախութիւնը: Կրօնի վարդապետութեան անմատչելութիւնը և քահանայապետութեան անսասանութիւնը, որի զուտն է պատրիարք կաթողիկոսը: Միայն նորան կնատեանի ամեն երկիրներէի Հայերի հոգեւորական իրաւասութիւնը: միայն նա կձեռնադրէ եպիսկոպոսներ և կօրհնէ միւռօնը: Հայերի մէջ Էջմիածնի մայր աթոռի մեծ նշանակութիւն ունենալու պատճառով, Հայաստանի նուաճողների կողմից նա առանձին յարգանք և ապահովութիւն կվայելէր միշտ: մահաւորականների տիրապետութեան միջոցին Էջմիածինը 500 հարուստ զիւղեր ունէր:

«1828 թուի պարսկական պատերազմից յետոյ Էջմիածինը կայսերութեան սահմանների մէջ մտաւ: Ներկայ պատրիարք կաթողիկոսը հայրապետական գահ բարձրացաւ 1866 թուին: Նորա կառավարութեան ժամանակը նշանաւորված է զպրօքների բազմանալով, Էջմիածնում հոգեւոր ձեմարանի հաստատութեամբ: որին անկասկած վիճակված է շատ երեւելի նշանակութիւն ստանալու հայկական եկեղեցու պատմութեան մէջ: նոյնպէս և հարուստ Էջմիածնեան մատենադարանում պահպանված բազմութիւ պատմական և կրօնական ձեռագիրների հրատարակութեամբ:»

* *

Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեց հետեւեալ կոնդակներ շնորհել մայիսի 15-ից մինչև յունիսի 1-ը:

Կոնդակ, որով կհաստատուէ Գէորգ Զանիրէկեանին, Վազար Տէր Վազարեանին, Մովսէս Վարդանեանին և Յովհաննէս Կարճիկեանին Վազարչապատի հոգեւոր զորոցի հոգաբարձութեան պաշտօնում: Մայիսի 19, № 236:

Կոնդակ հաստատութեան Գէորգ Ազօղաբեանի, Սուքիաս Կարապետեանի, Գէորգ Յովհաննէսեանի, Յովհաննէս Դիլանեանի և Մկրտիչ Աւետիսեանի, Երեանի Նորգ քաղաքամասնի հոգեւոր երկօքո զորոցների նորընտիր Հոգաբարձութեան պաշտօնում: Մայիսի 20, № 238:

Կոնդակ օրհնութեան Գրիգոր Եարամիշեանին Գրիգորիպօլեցուն, որով իւր զօհունակութիւնը կյայտնէ տարեկարծի շնորհաւորութեան համար և փոքրագիր ձեռագիր և նօտարգիր շարական մատուցանելու համար ի յիշատակ իւր հանգուցեալ հօր: Մայիսի 26, № 249:

Կոնդակ Գրիգորիս Աբբեպիոկոպոսին, Պարսկաստանի և Հնդկաստանի Հայերի առաջնորդին նորա երկու զրութիւններն ընդունելու և Մայր Աթոռիս և Թիֆլիսի Մողնու ս. Գէորգ եկեղեցու անունով կտակաւանդ դումարների մասին: Մայիսի 26, № 250:

Պատասխան զրութեան առ Պ. Ստարուէլսկի Կովկասի փոխարքայութեան զլիաւոր կառավարիչը: որով կյայտնէ նորան եկեղեցիների և ուրիշ հայ հաստատութիւնների աղբիւրների մասին, նոյնպէս և հոգեւոր զորոցների, որոնք հայ ժողովրդից կմատակարարվին, բայց այսպիսի միջոցներն չեն կարող փոխել նաև զորոցների իսկական նպատակը և զրութիւնը և նոցա համարել տալ քաղաքական զորոցներ, և կյաւելու յիշել կայսերահաստատ արտօնութիւնները, որով կորոշվին այն զորոցները, որոնք արքունական տեսուչների հօկողութեան պիտի ստորադրվին ռուսական լեզուի և Ռուսիայի պատմութեան և աշխարհագրութեան նկատմամբ, եւ կյայտնէ թէ պատուիրած է Սինօղին և առաջնորդներին կանոնների համաձայն արժանն տնօրինել և թողլ տալ արքունի տեսուչներին իւրեանց պարտքերը կատարելու հայ ծխական զորոցներին հսկողութեան վերաբերմամբ, թէև ցարդ որպիսի եկեղեցի տեղադրութիւն չէ լսված: Մայիսի 27, № 252:

Կոնդակ Սինօղի անունով, որով կպատուիրէ շարունակել հրամանագրել որոնց հարկ է հաղորդել սահմանված կարգով զորոցների տարեկան ցույցակները և թույլատրել արքունի վերատեսուչներին և տեսուչներին կատարելու իւրեանց պարտքերը վերջին կարգադրութեան համաձայն, որպէս զի տեղադրութիւնների տեղիք շտրվին ինչպէս մինչև ցարդ չէ տրված, նոյնպէս կյանձնէ և կովկասեան փոխարքայի գլխաւոր կառավարչի զրութեան պատճէնը և Վեհ. Կաթողիկոսի պատասխանի պատճէնը: Մայիսի 27, № 253:

Կոնդակ Փանիկ գիւղի նորընտիր հոգաբարձուներին, որով կհաստատուէ նորակառոյց զորոցի հոգաբարձութեան պաշտօնում: Սիմէօն քաջ. Տէր Ահարոնեանին, Յարութիւն Աբաղանին, Սեդրակ Արրահամեանին, Յակոբ Արապետեանին և Մուշեղ Յակոբջանեանին: Մայիսի 31, № 262: